

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

53րդ ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 38

20 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անհետացող Դեմքեր. «Տոբ. խորանանի». Տ. Ա.—Գաւառի կիներ (Բացասութիւն մը) ՅՈՎՀ. ԳԱԶԱՆՃԵԱՆ.—Տեսութիւն մը մեր եւ օտար բանաստեղծներուն վրայ (Վերջին մաս) ԵՐՈՒԱՆԴ. ՄԵՍԻԱՅԱՆ.—«Ուրա՛ն դիւրին է եղեր» (Նորալիպ) : ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ : Բանաստեղծութիւններ. «Կը քնանայ». Ե. ԳՕԼԱՆՃԵԱՆ : —«Ձերմը». Վ. : —«Լիճը». ԼԱՄԱՐԴԻՆ. քարզմ. ՓԱՅԼԱԿ : —Խմբագրական նօթեր : —Լիլիէն Մօրրիս (Վեպ) Հէնրի Բ Սէն. Գիւլիւմ. քարզմ. Չիֆթէ-ՍԱՐԱՅ :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթերի օրական բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար քառսուն դր. եւ արտասահմանում համար յիսուն դր., կանխիկ վճարելի : Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 1 Լիւր : Թղթաստացիական ծախքը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրութիւնը 12 Լիւր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ արակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու : Այն բաժանորդները որոնք պակաս քէք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն խմբագրութեան : Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր :

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր :

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշէլի պայմաններով :

Ձեռքի կը ծախուին ՀԱՏԻ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غزته سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Դալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՀԱՋՐԱՅԻՆՈՐ ՏԱՐԻՆԵՐ

Աս նոր գիւտի Օրուան հետ համեմատելով խիստ քիչ կարեւորութիւն մը ունին: Խոզատանձ (սըրաճա) և արեան տկարութիւն և միւս արեան քէշութեան հետեւնքները, որոնք մարմնայ տկարութեան նշաններն են, պիտի աղետները դարմանող և բժշկող գեղ մը կրնայ միայն ամեն կարեւոր և ամենաքանդելի բան մը համարուիլ: Ահա սոքի հիմայ աշխարհիս մէջ կայ գեղ մը բոլոր այն փառերու գէտ:



Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

23

SCOTT'S EMULSION

որ Առեգական միջնորդի մէջ գտնուած փոշիները լորցնելուն պէս, նոյն հիւանդութիւնները կը բժշկէ:

ԸՍԿՕԹԻ ԲԵՂԵԳՐՈՒԹԻՈՒՆ

նաեւ մարդկային մարմինը շրջապատած բոլոր փառերը հեռու կը վերնառէ:

ԸՍԿՕԹԻ ԲԵՂԵԳՐՈՒԹԻՈՒՆ

Արեան տկարութիւն ունեցող աղայ կանայք կը փրկէ:

Բոլոր բեղաճեցումները և բեղաճանքները կը ծախեն:

“AU TALON D'OR” ՕԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՋԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՌԼՕ ԱՅՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՏԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կաղերու համար պատրաստուած

Կալաքա, Վոյվոսա փողոց, թիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կօշիկներու յանձնարարութեան համար,—մանաւանդ չափու վրայ շինուած լիք,—կ'արժէ անգամ մը այցելել սոյն վճառատուներ:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կրսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ թիշ կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդ պէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱ. ԳՈՒԼԵԱՆԻ՝ Ձինաստանէն, Հնդկաստանէն, Ճաւայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած քարմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք սառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վճառաւորին:

Կ. Պոլիս, Պահէճ Գափու, Ճէլալ պէյ Խան, թիւ 10:

Մասնաճիւղեր թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն գնելու պէտք ունեցողները կրնան դիմել Կաթուղին գլուխը լրագրավաճառ Միսաք աղային:

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. Կառավարութեան ֆոնդային ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոհ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէնկողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիզի՝ Օբէրա, Վոսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Յօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ Պօստոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէռի, Օթէլ-տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսպորտներ, Հալը-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, ֆրանսական Թրանսպորտներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր Կազմական Կանոնադրին համաձայն, պարտաւոր է աւելն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական նախարարութեան քնննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան դրամատուրն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբ ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie générale d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հաւսցէ.—Պօլիս, Մանիւտ փաշա, Պէտիւք Երլաղ Խան, Թիւ 14, Լա Դօնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Դառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական անփականութիւնը եղող, անբիւր վաճառատուն մը, Պօլիս, Շուկա, Մուհաֆաղաճըլար, Թիւ 46, ուր գաւառներէն առեւծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:



ՌՕՍՒԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՂ, ԿԵԱՆՔ, ՓՈՒՍԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքրազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՂԻ, ՓՈՒՍԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԴՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵՆԱԻՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱԻՔՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՒՐՈՆԵՐՈՆ ԴԵՄ:

Ընկերութեան դրամադուլսը, ամբողջապէս վճարուած	10,666,667	Փրանք
Երաշխաւորութեան գումար աւելի քան	137,300,000	»

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա- գլուխ եւ փնտուց հատուցում	282,000,000	»
--	-------------	---

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տոկոս	54,000,000	»
--	------------	---

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա, — եւ Ղալաթիոյ Գործակալութեան, Էսկի Կէօմրուք խան, Բարափին վրայ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՋԱԿ

Վարժարանին նպատակն է տալ միջնակարգ, հիմնական կրթութիւն մը, հետեւելով Անգլիական ու Ամերիկեան նոյնօրինակ Հաստատութիւններու (High School) ծրագրին: Նոյն ատեն ալ, սակայն, նկատի առնելով երկրին պահանջները՝ մասնաւոր խնամք կը տարուի տոհմային ու Պետական լեզուներու եւ գրականութեան, ինչպէս նաեւ ֆրանսերէնի: Ամենէն պզտիկ կարգերէն սկսելով՝ կարգ մը դասեր կ'աւանդուին անգլիերէն լեզուով, որպէս զի բոլոր աշակերտները կանուխէն ընտելանան Անգլիերէնի: Տնօրէնը Տոքթ. Զէյնալըս կ'աւանդէ տնտեսականութեան դասը, որ մասնաւորապէս կը յարմարցնէ ընթացաւարտները գործնական կեանքի: Առողջապահութեան դասը կ'աւանդէ վարժարանին բժիշկը որ միանգամայն մոտէն կը հսկէ բոլոր աշակերտներուն առողջութեանը վրայ: Գիտական ճիւղերու դասախօսութիւններն արդիւնաւորելու համար՝ վարժարանը ունի պիտանի ու անհրաժեշտ գործիքներու ընտիր հաւաքածոյ մը: Նորակառոյց նպատակայարմար շէնքը եւ նորատաց ընդարձակ հողերը՝ ամէն ժամանակէ աւելի նպաստաւոր են աշակերտներու հանգըստութեան եւ առողջութեան, գեղը ըլլալով արդէն հանրաճանօթ՝ իր մաքուր օդով եւ գեղեցիկ տեսարաններով:

Վարժարանին վերաբացումը (24րդ տարեշրջան) տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր երեքին (Ն. Տ.): Տարեթոշակն է 16 օսմ. ոսկի: Աւելի մանրամասն տեղեկութիւններու համար դիմել անձամբ՝ Պայպրլ-Հաուզ, Կ. Պոլիս, կամ նամակով Տնօրէնութեան, Պարտիզակ:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԻՒՍԿԻՒՏԱՐ

Ամերիկեան Վարժարանի յոռաջիկայ տարեշրջանը կը սկսի 1903 Սեպտ. 15ին (Ն. Տ.): Գիշերօթիկներու տարեթոշակն է 35 օսմ. ոսկի Ուսումնարանին չորս դասընթացքներուն համար, իսկ 30՝ նախակրթարանին համար:

Տնօրէնութիւնը ջանք չէ խնայած վարժարանը ամէն առաւելութիւններով օժտելու: Լաւագոյն դրութիւնով եւ մեծ յաջողակութիւնով կ'ուսուցուն Հայերէն, Ֆրանսերէն, Անգլիերէն, Գերմաներէն եւ դասական լեզուները, ինչպէս նաեւ ընական գիտութիւններ:

Հմուտ եւ վարժ հիւանդապահուհիի մը աշաւուրջ հսկողութիւնը կը վայելեն աշակերտուհիները եւ կ'ապրին խաղաղ ու բարեկարգ մթնոլորտի մը մէջ:

Աւելի տեղեկութիւններու համար դիմել վարժարանին Տնօրէնուհի Տր. Փէթրիքի:

ՄԱՍԻՆ

53րդ ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԲԻՒ 38

20 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1903

ԱՆՅԵՏԱՑ ՈՂ ԴԵՄՔԵՐ

ՏՕՔԹ. ԽՕՐԱՍԱՆՆՃԻ

Ամառ թէ ձմեռ՝ իր գոյ կառքին պատահանէն ընդհարուող նիհար կիսադէմքը, միշտ լրագրի մը վրայ յառած, սնշարժ նըստուածքը՝ որ ամէնէն շարժուն ու գործօն կեանքը կը մարմնացնէր, այն արագասահ երեւումներէն էին որոնք տպաւորութիւն մը կը թողուն և անցորդներուն գլուխը անըզգալաբար դէպի իրենց կողմը դարձնել կուտան։ Եւ Տօքթ. Խօրասանճի, իր զնայքին մէջ, եղականօրէն կը շարժէր այդ հանրային հետաքրքրութիւնը, թէև միօրինակ ըլլար իր երթեւեկը, դէպի հիւանդի մը տունը ուղղուած կամ հիւանդի մը տունէն վերադարձող։ Ու այս այսպէս տեսեց երեսուն—քառասուն տարի, անընդհատ։

Տօքթ. Խօրասանճի այնքան անմատչելի մնացած էր արտաքին, ընկերային կեանքին, —գերազանցապէս ընկերային ու ազնուական անձ մը ըլլալով մէկտեղ, —որ իր երևումը եմթադրել չէր տար բնաւ թէ իր արուեստին կիրարկումէն կամ բրոֆէսօրի պաշտօնին կատարումէն տարբեր բանի մը համար էր որ կ'անցնէր կ'երթար։

Իր տանը, իր բժշկական յարկաբաժնին մէջ, որ միջազգային հիւանդարան մը դարձած էր անխուսափելիօրէն, այլապէս պատկառելի էր Տօքթ. Խօրասանճի, որուն տեսակ մը երկչոտութեամբ կը մօտենային հիւանդները, ա'յն աստիճան՝ որ բժշկապետը կը հարկադրուէր մտերմական չեղտ մը դնել իր խօսուածքին մէջ, ակտաճանաչութեան հարցումներն ու զննութիւններն սկսելու համար։ Այդ խուցը, կէս—մութի մէջ, գիտա-

կան առարկաներով, գիրքերով, նկարներով, լեցուն, որուն մէջտեղը՝ գրասեղանին առջև՝ բազմած կամ ոտքի վրայ կեցած կ'ըլլար ծերունի տօքթորը՝ իւրաքանչիւր մտնողը ընդունելու համար, իր է'ն սիրական միջոցորան էր, իր հորիզոնը, իր տիեզերքը։ Հաղարաւորներ կուգային կ'անցնէին անկէ, ամէն տարի, տխուր ցուցադրութիւն մը, կսկծալի տողանցում մը պարզելով ամէն տեսակ ակտերու, ցաւերու, տառապանքներու։ Մաշած թոքեր, հատնելու մօտ շունչեր, բաբախէլ գաղբող սիրտեր բոլորն ալ ոյժ և կազդուրում կը փնտռէին իրմէ հաւատքով մը որ բարեպաշտ ուխտագնացներու հաւատքէն շատ չէր տարբերէր։ Եւ Տօքթ. Խօրասանճի, փոթորկին դէմ անխուով նաւապետին պէս որ մինչև վերջին շունչը կը մաքառի իրեն վըստահուած ուղեւորները փրկելու համար, անայլալ՝ բայց յուսատու, կը նուիրէր զիտութեան հնարաւոր դարձուցած դարմանները՝ իր ահագին փորձաւորութեանը օժանդակութեամբ։ Հիւանդները, եթէ բժշկուած չի հեռանային իրմէ, գոնէ սկիզբուած կը վերադառնային. վասն զի, Տօքթ. Խօրասանճի՝ առանց սին յոյսեր ներշնչելու յուսահատ հիւանդներուն, մարդասիրութեան հակառակ կը նկատէր սառն կերպով հաղորդել անոնց՝ բժշկութեան վերջին վճիռը։ Եւ որքան իր ճարտարութեան ու արդար համբաւին՝ նոյնքան ալ իր այս առանձնայատկութեան մէջ կը կայանար գաղտնիքը իր ժողովրդականութեանը որ երբեք չի տկարացաւ։

Բարետոնմիկ գերդաստանի մը այս դա-

ւակը, ինքն ալ, իր կարգին, պետք եղած էր աշխուաբարոյ ընտանիքի մը որուն բարօրութեան նուիրած էր գուրգուրալից հոգածութիւն մը, իբրեւ պատուական ամուսին և հայր, իր բովանդակ կեանքն ու աշխատութիւնը նուիրելով, միեւնոյն ատեն, գիտութեան ու մարդկութեան: Եօթանասուն տարիներու բեռան տակ ու ծայրայեղօրէն յոգնած, Տօքթ. Խօրասանճի ուսումնասիրող մըն էր միշտ, խղճամիտ հետեւող մը բժշկական աշխարհի նորութիւններուն, գիտելուն, կարգաւոր ու կարգաւոր շարունակ: Իրեն համար՝ միակ հաճոյքը, միակ վայելքը հիւանդներ դարմանելուն և դարմանման նորագոյն դրութիւնները ճանչնալուն մէջ կը կայանար. և այս այնքան ճիշդ է. որ մինչ ուրիշ մը, իր տեղ, իր բարեկեցիկ դիրքին մէջ, վաղուց հանգիստ առած պիտի ըլլար, ինքը՝ իր դոկտօշուն ձեռքերով՝ շարունակեց բազկերակներ գննել ու մագաղաթի պէս ծիւրած, խորշոմած դէմքը կռթնցնել հիւանդ կուրծքերու, յաւիտենապէս կրկնելով «չո՛ւնչ առ, հազա՛» մինչև որ իր շունչին ալ տակաւ տակաւ սալառիւն զգաց ու կաթուածի հարուած մը անշարժութեան դատապարտեց իր բարերար ձեռքը:

Իր բժշկի հանգամանքէն ու արժանիքէն անկախաբար, Տօքթ. Խօրասանճի հմուտ անձնաւորութիւն մըն էր, մտաւորական ու ընկերային ձիրքերով օժտուած, և հրապուրիչ խօսակցութիւն մը ունէր որ, առանց հեռանալու լրջութեան սահմաններէն, *causerie* մը կը դառնար, համով, սրամիտ, իր մտերիմներուն համար: Կեանքի մեծ փորձառութիւն ունեցող այս մեծ բժիշկը *blasé* մը չէր սակայն. ընդհակառակը, բուխ սիրտ մը ունէր—կ'ըսէին—և իրեն մօտեցողներուն հետ, ժողովրդային է՛ն ուսմիկ դասակարգէն ալ ըլլային անոնք, դիտէր տեսակցիլ պարզութեամբ մը որ կը սրտապնդէր զանոնք ու բարի յիշատակ մը կը թողուր անոնց մտքին վրայ, երբ իրենց տունը, իրենց գեղը վերադառնային: Իր այս գլոխ զգացումը լայնօրէն կ'արտայայտուէր Ազգ. Հիւանդանոցին նկատմամբ ցոյց տուած հոգածութեամբը, որ

իրեն ընդունել տուաւ Հոգաբարձութեան անդամակցութիւնը, ինքը՝ որ հեռու մնացած էր ազգ.—վարչական շրջանակի մէջ որ և է պաշտօն ստանձնելէ, որուն ո՛չ ժամանակ ունէր ո՛չ արամադրութիւն: Հիւանդանոցը այլապէս կը հետաքրքրէր զինքը, իբրեւ մարդասէր բժիշկ, և թէպէտ իր առաջարկած ներքին բարեփոխման ամէնքն ալ չի կրցան գործադրուիլ՝ նիւթական դժուարութեանց պատճառով, բայց Տօքթ. Խօրասանճի կը շարունակէր իր խորհուրդներն ու կարծիքները տալ. և իր ծախքով վերաշինեց ու կազմակերպեց այդ հաստատութեան դեղարանը, նուիրելով զայն իր հօր՝ Խօրասանճի Պետրոս Ամիրայի յիշատակին: Մասնաւոր հակում մը ունէր մանաւանդ Գալֆայեան Ուրբանոցին նկատմամբ որուն կ'ը կարեկցէր իբրեւ բարեգործական ազգատիկ յարկ մը՝ օժանդակութեան կարօտ: Երանուհի մայրապետին հիւանդութեան վերջին օրերուն, իբրեւ փրկութեան գերագոյն միջոց, Տօքթ. Խօրասանճիին դիմում եղաւ որ փութաց երթալ Խազգիւղ: Հոն կը գտնուէր դիպուածով մը որ առաջին ու վերջին տեսակցութեան մը առիթը կ'ընծայէր ինձ յարգելի բժշկապետին հետ. իր երեւումը, մայրապետին մնարին վերեւ, կենդանութիւն մը բերաւ կարծես անոր թմրած մարմինն և ուշակորոյս մտքին: Յետոյ, վարը՝ հիւրանոցին մէջ, ուր հանգիստ առաւ Տօքթ. Խօրասանճի՝ իրեն ընկերացող պաշտօնակիցներուն հետ, պարզեց կարգ մը գործնական տեսութիւններ Ուրբանոցին քայքայուած վիճակը բարելաւելու համար, որոնց ձեռնարկած էր արդէն Տիկիներու Խրնամակաւորութիւնը. և խօստացաւ իր ձեռքէն ալ եկած աջակցութիւնը նուիրել: Անկեղծ շնչաւ մը կար իր խօսուածքին մէջ, հայրական գուրգուրանք մը սլուրիկ աղջիկներուն նկատմամբ որոնց նիստուկացը, սեղանը, անկողինները մօտէն քննած էր պահ մը առաջ. յայտնապէս յուզուած կ'երեւար այդ վայրկիւնին: Մայրապետին գալով, հազիւ քանի մը ամսուան կեանք կը մնար կաթուածահար խեղճ կնոջ: Եւ հիմայ, որ տարին չի բոլորած, Տօքթ. Խօրասանճին ինքն ալ զո՛հ գնաց

կաթնածիլ, իր առողջ ծերութեանը մէջտեղ
ուր մահը այսքան մօտալուտ չէր զգար ընտ,
կը յիշեմ այն օրուան մեր մեկնումը Սաս-
ղիւզէ որուն ամայի վառիւլայրերէն կ'իջնե-
ինք՝ պատկառոտ մեծարանքով մը շրջապա-
տած բժշկապետը որուն սէգ հասակը, հա-
տու խօսուածքը և իր հիւանդներուն երթալ
հասնելու վուրթկոտութիւնը դեռ երկար կեան-
քի մը ապահովութիւնը կ'ընծայէին, — որ
ձակատաքերին մէկ դառն խաբկանքն է եղեր,
աւաղ:

S. Ս.

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՎՍԵՄ. ՏՈՔԹ. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ ԷՖԵՆՏԻ

Ողբացեալ բժշկապետին յուղարկաւորու-
թիւնը իր համբաւին արժանի հանդիսաւորու-
թեամբ կատարուեցաւ չորեքշաբթի առաւօտ
Բերայի մէջ, յուղարկաւորներու ստուար
բազմութեան մը ներկայութեամբ որոնց մէջ
ստալին տեղը կը գրաւէին Քաղաքապետ
փաշան, Բերայի կառավարիչ պէյը և պե-
տական ուրիշ բարձրաստիճան պաշտօնատար-
ներ, ինչպէս նաև ամբողջ բժշկական դասը և
բժշկական վարժարանի ուսանողներ՝ որոնք
շրջապատած էին իրենց սիրելի պաշտօնակցին
և ուսուցչին դագաղը: Ներկայ էին նաև սե-
ղանաւորական ու առեւտրական դասը, Պատ-
րիարքարանի ժողովականներ, մամուլի ներ-
կայացուցիչներ և հայ համայնքին ամէն դա-
ւակարգերը ներկայացնող բազմութիւն մը:
Տան կարգը հանգուցելոյն բնակարանին մէջ
կատարուելով, դագաղը հանդիսաւոր թա-
փօրով առաջնորդուեցաւ Ս. Երրորդութիւն
եկեղեցին: Թաւշեայ բարձիկի մը վրայ՝ դա-
ղալին առջևէն կը տարուէին Ա. Կարգի
Մէծիօրայէ ու Բ. կարգի Օսմանիյէ պատուա-
նշանները և Լիազաթի ու Իմթիաղի ոսկի
շքադրամները որոնց արժանացած էր Տօքթ.
Խօրասանճեան էֆ:

Եկեղեցւոյն մէջ՝ արարողութեանց նախա-
դահնց Ս. Պատրիարք Հայրը՝ շրջապատուած
եպիսկոպոսներէ, վարդապետներէ ու քահա-
նաներէ, և պերճախօս դամբանական մը խօ-

սեցաւ. զգածեալ շեշտերով, ներկայացնելով
Տօքթ. Խօրասանճեան էֆ. ն իրր տիպար աշ-
խատասիրութեան, գիտուն և մարդասէր
բժիշկ, ընտանիքի պատուական հայր, և ա-
ռաքինի ու բարեպաշտ անձ: Մասնաւորա-
պէս շեշտեց սա պատուաբեր պարագան թէ,
Տօքթ. Խօրասանճեան էֆ. բժշկական ար-
ուեստին մէջ իր շարունակական հետապն-
դումներուն և անդադար աշխատութեամբ
յառաջդիմելուն շնորհիւ է որ արժանացած
էր Կայսերական զնահատման, բարձրանալով
մինչև Պալայի աստիճանին: Ն. Սրբազնու-
թիւնը խօսքը ուղիւնով հանգուցելոյն ժա-
ռանդորդներուն, ըսաւ թէ ինչպէս որ իրենց
բարեյիշատակ հայրը բարձրացուցած էր Խօ-
րասանճեանց անունը, իրենք ալ հետեւող
ըլլան անոր, ու երկնային մխիթարութիւն
հայցեց ամբողջ ընտանիքին:

Դագաղը հանդիսաւորապէս հանուելով
եկեղեցիէն, բակին մէջ «Հոգւոց» արտասա-
նեց Ս. Պատրիարք Հայրը եւ ներկաներն ի-
րենց ցաւակցութիւնը յայտնեցին հանգուցե-
լոյն որդւոյ՝ Պետրոս պէյ Խօրասանճիի եւ
Տօքթ. Յովհ. պէյ Խօրասանճիի: Յե-
տոյ, քառածի մեռելակառքով մը Շիրիի
աղդ. զերեղմանատունը փխադրուեցաւ
դագաղը, որուն հետեւեցան յուղարկաւոր-
ներուն մեծագոյն մասը: Գերեղմանատան մէջ,
դամբանականներ աբտասանեցին Տօքթ.
Դաւիթմանճեան եւ Տօքթ. Մատթէոսեան էֆ.
ները, եւ հարիւրապետ Տօքթ. Նիսատ պէյ
որ ի զիմաց զինուորական եւ բժշկական
վարժարաններու բոլոր աշակերտներուն և
ուսուցիչներուն՝ խորին ցաւ յայտնեց: Թաղ-
ման տխուր արարողութեան նախագահեց
Բերայի քարոզիչ Տ. Հմայեակ Սրբազան՝ իր
քով ունենալով հանգուցելոյն տաներէց Տ.
Մկրեան Ա. քահանան:

Խօրասանճի եւ Փօն Բուռնգուլ ընտանիք
իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտ-
նեն ամէն անոնց որոնք բարեհաճեցան ի-
րենց ցաւակցութիւնները յայտնել ողբացեալ
ՏՈՔԹ. ԽՕՐԱՍԱՆՃԻԻ մահուանը առթիւ:

ԼԵՃՐ

—*—

Միշտ դէպ ի նոր ծովափներ մղուած այսպէս, ու յաւէտ
Ձգուած անվերջ գիշերուան մ'անվերադարձ ընթացքին,
Կարող պիտի չըլլա՞նք մենք խարխիս նետել օր մը գէթ
Ովկէանին մէջ կեանքին:

Լըճա՛կ, հաղիւ թէ սարին իր չրջանը բոլորեց,
Ալեակներուդ քով սիրուն՝ զոր պիտի ան ալ տեսնէր՝
Մինակ կուգամ նստելու ճիշդ սա քարին վրայ տե՛ս
Ուր անիկա նստած էր:

Այս ժայռերուն աակ խորունկ ճիշդ այսպէս կը մնջէիր
Փշրուելով կողերուն վըրայ անոնց պատառուն,
Հովն ալ կուգար նստելու ալեակներուդ փրփուրն, իր
Պաշտելի նուրբ ոտքերուն:

Դիշեր մըն ալ, կը յիշե՛ս, նաւակ նստանք անբարբառ
Ոչ կոհակին վրայ ձայն կար, և ոչ ալ երկնից տակ,
Հարուածէն զատ համաչափ թիակին որ կից կուտար
Ալեակներուդ ներդաշնակ:

Դեռ քշխարհի անծանօթ չեշտեր, յա՛կարծ, արձագանդ
Դացին տալու ծովափին, որ հմայուած էր կարծես.
Եւ մինչ մտիկ կ'ընէին ուշադիր ծովն ու ծիւանք,
Պաշտած ձայնըս թօթովեց.

«Կանգ առ վաղքէդ, ժամանակ, աղուոր ժամեր, հաւ դուք,
Մ'ըլլաք այդպէս անկայուն.

Թողէք, թողէք որ վայելնք հմայքները խոստովուկ
Մեր էն աղուոր օրերուն:

«Շատ թշուառներ կան հոս, որք ձեր անցնիլը կ'ուզեն շուտ.
Անոնց համար սահեցէք,

Անոնց կեանքին հետ առէք տարէք վշտերն ալ անդու՛թ:
Երջանիկներն, ո՛հ, մոռցէ՛ք:

«Բայց ես ի դուր վայրկեաններ կը մուրամ, միշտ խոյս կուտայ
Ժամանակը անարգել,

«Կամայ» կ'ըսեմ գիշերուան և արշալոյսը կուգայ
Լէնդհուպ մութը փարատել:

«Սիրե՛նք ուրեմն, ո՛հ սիրե՛նք, ու վայլելու չտապենք
Այս ժամերը վաղանցիկ,

Ո՛չ ժամանակն ախունք ու կայանք ունի, ոչ ալ մենք,
Ան կը սահի ու կ'անցնինք»:

Ո՛վ նախանձոտ ժամանակ, մեր բաղձանքին հակառակ,
Արբշտանքի սիրազեղ անուշ ժամերն ալ ինչո՞ւ,
Տառապանքի թախիծի սեւ օրերուն չափ արագ
Կը խուսափին միշտ հեռու:

Անոնց հետքն իսկ որոշել կարող պիտի չըլլանք դէժ .
Ի՞նչ , կորսուած են յաւէտ . սահմած , գտցած ամէնքն ալ ,
ժամանակը՝ որ զանոնք բերաւ տարաւ իրեն հետ՝
Նա չպիտի՞ տայ դարձեալ :

Յաւերժութիւն , անէա՛նք անցեալ — մի՞նն անդունդներ —
Ի՞նչ կ'ընէք այն օրերը , զոր կուլ կուտաք , ո՛հ ըսէ՛ք ,
Մեղի դարձեալ պիտի տա՞ք այսքան դիւթիչ հմայքներ ,
Որոնցմով մեղ կ'արբշնէք :

Ո՛վ ջինջ լըճակ , մունջ ժա՛յուեր , քարայրներ ու մութ անտառ
Դուք որ կրնաք վերածնիլ , ժամանակէն խնայուած ,
Աղուոր բնութիւն , պահե՛ցէք դէժ յիշատակն անվթար ,
Այդ գիշերուան կորսուած :

Թէ ծփանքիդ մէջ հանդարտ , թէ փոթորկիդ մէջ վայրադ ,
Աղուո՛ր լըճակ , ափերուդ բլուրներուն մէջ խնդուն ,
Նդիւխներուն մէջ թուխ , թէ ջուրերուդ վրայ հակ
Ժայռերուն մէջ լպրծուն ,

Թէ ըլլայ մէջ զեփիւռին՝ որ կը սահի դողալով
Նդերքներուդ կրկնուած մրմունջին մէջ ներդաշնակ ,
Արծաթափայլ լուսնակին շողերուն մէջ հոգեթով ,
Որք քեզ կ'ընեն ճեպ ճերմակ :

Թող հառաչանքն եղէգին , հեծեծմունքը հովերու
Մթնոլորտդ լեցընող անուշահոտ բոյրը սին ,
Թող ինչ որ մարդ կարող է լսել , տեսնել , չնչելու ,
Ամէնքն բսեն . «սիրեցին» :

Թարգմ. ՓԱՅԼԱԿ

ԼԱՄԱՐԻՒՆ

ԳԱԽԱՌԻ ԿԻՆԸ

(ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ)

Համակրելի բարեկամս Օ. Զիֆթէ-Սարաֆ
Հայ Կնոջ բարոյականին նկատմամբ ուսածաղ-
բած հարցումին տրուած հինգ պատասխան-
ներուն վերլուծութիւնը ըրած է Մասիսի
Յէրդ թուով ուր իմ պատասխանս ալ կարդ
մը համակրալից սողերու մէջ խնդրոյ առար-
կայ ընելով՝ մասնանիջ կ'ընէ սակայն ինչ
ինչ հակասութիւններ : Նախ չնորհակալու-
թիւնս յայտնելով իրեն՝ իր գնահատական
սողերուն համար , աւելորդ չեմ համարիր
միեւնոյն ատեն մէկ քանի բացատրութիւն-

ներ տալ ապացուցանելու համար թէ պզտիկ
մտադրութիւն մը պիտի բաւէր այդ կարծեց-
եալ հակասութիւններու թիւրիմացութիւնը
փարատելու . եթէ երբեք «փաստելու և մեկ-
նաբանելու իր նոր ասպարէզին մէջ հակա-
ճառութեանց վարժութիւններ ընելու» փա-
փաք մը չէ որ յարգելի գրագէտը ձգտած է
կամայ թիւրիմացութեանց մէջ :

Բայց ամէն բանէ առաջ կ'ուզեմ անդրա-
դառնալ Զիֆթէ-Սարաֆի բուն հարցման որ
հետեւեալն է : Իբա՞ւ է որ ապօրինի յաւա-
րեութիւններ կը վիսամ գաւառներու մեջ
եւ երբե՞ն ի վեր... : Ուրեմն հարցումը եր-
կու որոշ մաս կը պարունակէ . առաջին՝ ճշ-
դել ներկայի մէջ ապօրինի յարաբերութեանց
դոյութիւնը գաւառներու մէջ . երկրորդ՝ ըս-
տուղիւ թէ այդ վիճակը ո՞ր թուականէն կը
սկսի :

Հարցման առաջին մասին մէջ հինգ պատասխանողներէն վերջին չորսը իրարու կատարելապէս համաձայն են, երբ միարեւրան կ'ընդունին թէ հիմա գաւառներու, մանաւանդ գեղերու մէջ, տեղ տեղ հայ կնոջ բարոյական նկարագիրը ինկած է ինչ ինչ պատճառներով: Դաւթեան ընդհակառակը այս մասին աւելի լաւատես է, երբ ամէն դարու և ամէն ցեղի մէջ ապօրէն յարաբերութեանց գոյութեան կարելիութիւնը ընդունելով հանդերձ՝ կ'աւելցնէ թէ այս բանը սակայն չի փլցնէր գաւառի հայ կնոջ «համբաւեալ համեստութեան և հաւատարմութեան շէնքը» որուն կը հետեւին աւելի լաւատես տողեր:

Ուրեմն հարցման այս կէտին համար «ընդհանուր ներդաշնակութեան մէջ հակառակ թմբուկ զարնողը» ապահովաբար ես չեմ: Գալով երկրորդ կէտին, թէ երբէն ի վեր բկած են այդ ապօրէն յարաբերութիւնները, եթէ այս կէտին համար է որ Զիֆթէ-Սարաֆ կը կարծէ թէ հակառակ թմբուկ զարնող եղած եմ, այդ ալ ճիշդ չէ, զի միւս պատասխանողներն ալ ինծի հակառակ բան մը ըսած չեն: Նկատել պէտք է թէ Շահարիկ, Քէշիշեան և ուրիշներ՝ գաւառական և գիւղական բարքերու ներկայ վիճակը միայն նշկատողութեան առած են և անցելոյն վրայէն գրեթէ բոլորեամբ անցած, մինչդեռ ես անցեալն ու ներկան միանգամայն նկատողութեան առած եմ: Սակայն, ինչպէս միւսներու գրածներէն ալ բացօթոյ կերպով կը հասկցուի, անոնք ալ ինծի հետ կը վիպեն թէ գաւառներու և գիւղերու մէջ տեղ տեղ ակնող բարքերու այս ինկածութիւնը, ապօրինի յարաբերութիւնները նորագոյն բարքերու երեւոյթներ են և թէ հետզհետէ շատնալ սկսած են: Ուրեմն ըսել կ'ուզեն թէ ներկայի ապականեալ բարքերը եղած չեն երբեմնի բարքերը, ինչ որ արդէն ես ալ հաստատել ուզած էի աւելի բացօթոյ կերպով մը: Կը տեսնէ ուրեմն Զիֆթէ-Սարաֆ թէ անցեալ բարքերու մասին երբեք իր կարծածին պէս խորհած չեն իմ ընկերներս. բայց ինք ամէն պարագայի մէջ չուզեր հաւատալ եղեր թէ «մէկէն ի մէկ փոխուած աղատուած ըլ-

լան մեր բարքերը» և անպատճառ իր այս կարծիքը imposer ընելու համար կ'աշխատի հակասութիւններ ի վեր հանել իմ դրութեան մէջէն:

Հիմա դանք այդ կարծեցեալ հակասութիւններուն: Զիֆթէ-Սարաֆ կը կարծէ թէ ես եւրոպական քաղաքակրթութեան դաւառներու և գիւղերու մէջ մուտ գտնելուն կը վերադրեմ բարքերու ներկայ ինկածութիւնը. այս պատճառաւ հակասական կը դոնէ երբ կ'ըսեմ թէ գեղի ժողովուրդը աւելի տգէտ ըլլալով՝ աւելի գէշ կերպով ինկած է, զի ըսել կ'ուզէ թէ քաղաքակրթութիւնը եթէ ըլլար չարիքին պատճառը, գիւղերու բարքերէն աւելի քաղաքներունը աւրուած ըլլալու էին, քանի որ քաղաքները աւելի ենթակայ եղած են եւրոպական քաղաքակրթութեան ազդեցութեանը: Ներուի մեզ դիտել տալ թէ Զիֆթէ-Սարաֆ ըմբռնած չէ ինչ որ ես ըսել ուզած եմ շատ բացօթոյ բառերով: Ո՞վ ըսաւ թէ գեղացի ժողովուրդը քաղաքակրթութիւնը իւրացնելուն համար է որ աւրուած է...: Ես գրած եմ թէ մեր հին բարքերը թողուցինք և դեռ նոր մը չինքն չենք, ուրեմն ըսել կուզեմ թէ ինչ որ հիմա ունինք՝ ո՛չ մեր հին քաղաքակրթութիւնն է, ո՛չ եւրոպականը, այլ բարքերու փոխանցման չրջանի յատուկ յոռի վիճակ մը: Ես կ'ընդունիմ թէ այս վիճակը առաջ եկած է ուրիշ շատ մը պատճառներու հետ նաեւ եւրոպական քաղաքակրթութեան ազդեցութեամբ, բայց ասով երբեք միտքէս չանցնիր ամբաստանել այդ քաղաքակրթութիւնը իրրեւ յոռի, իրրեւ փաստակար, այլ պարզապէս իրողութիւն մը կը սլարդեմ որ արդիւնքն է իրերու մէկ շատ բնական ընթացքին: Ո՞վ չի գիտեր թէ մեր հին բարքերը հիմնուած էին հաւատքի, կրօնքի, և կարգ մը դարաւոր ըմբռնումներու և նախապաշարունակներու վրայ ուր գիտութիւնը և բարոյականի գիտակից սկզբունքներ գործ չունէին գրեթէ: Հիմա ողջամիտ դաստիարակութիւն մը միայն պիտի կրնայ ապահովել մեզի այն բարոյականը զոր երբեմն միամիտ հաւատքի և վարաւոր նախապաշար-

բումներու չնորհիւ կրցած ենք պահպանել: Ահա թէ ինչո՞ւ համար գեղացի ժողովուրդը աւելի ինկած է, որովհետեւ աւելի ագէտ է: Առաջ՝ հաւատքին, նախապաշարման ուժը զինք իր տգիտութեամբը հանդերձ կը պահէր բարոյականի որոշ սահմաններու մէջ. հիմա նախապաշարումը վերցաւ և անոր տեղը չեկաւ յաջորդել մոտաւորական առողջ զարգացում մը:

Զեմ գիտեր թէ կա՞յ աւելի բացայայտ իրողութիւն մը թէ վերջին կէս դարու միջոցին մեր բարքերու մէջ ամենամեծ փոփոխութիւններ տեղի ունեցած են ամէն տեսակէտով: Ես ուրիշ անգամ բաւական ընդարձակ ուսումնասիրութեան մը առարկայ ըրած եմ այս խնդիրը(*), ուստի հոս չեմ ուզեր աւելի ծանրանալ այս մասին: Միայն կը զարմանամ Զիֆթէ-Սարաֆի ընդունել չուզելուն թէ սեռային բարոյականի մասին մեր հին բարքերն ալ փոխուած, այլասերած ըլլան: Իրաւ չի՞ հաւատար թէ դուրսերու հետ յարաբերութեանց օրէ օր աւելնալուն հետ մէկտեղ կարգ մը սխալ ըմբռնուած գաղափարներու և յուսի օրինակներու սերմեր բերուած նետուած չեն գաւառական և գիւղական ընտանի խաւերու մէջ ուր անոնք աճում գտած են տգիտութեան պատճառաւ: Ինչի՞ վերագրելու է նաև հայ ժողովուրդեան հետդիտէ հաւատքէ, բարեպաշտութենէ ու ծայրումը որ նոյնպէս վերջին տարիներու յատուկ երեւոյթ մ'ըլլալով հանդերձ՝ սերտ ազդեցութիւն նաև մեր բարոյական անկման հետ:

Զիֆթէ-Սարաֆի զիս հակասութեան մէջ կ'ուզէ տեսնել նաև երբ կ'ըսեմ թէ մեր բնիկ բարքերը ամէն տեսակէտով աւելի լաւ պահպանուած են գիւղերու մէջ որոնք ընդհանրապէս զերծ մնացած են օտար ազդեցութիւններից, մինչդեռ քիչ մը առաջ ըստծ էի թէ գեղերու մէջ ապականութիւնը աւելի աչքի կը զարնէ և այդ ապականութիւնը օտար ազդեցութիւններու վերագրած էի: Զիֆթէ-Սարաֆի կը հետեւնայ թէ քանի որ

գեղերու մեջ ապականութիւնը աւելի շատ է և քանի որ գեղերու բարքերը աւելի բնիկ են, ուրեմն ըսել է թէ հինէն ի վեր ապականութիւնը դոյութիւն ունեցած է մեր մէջ: Այս տեսակ հետեւութիւն մը հանել կարենալու համար հարկ էր որ ես հաստատած ըլլայի թէ ապականութիւնը հինէն ի վեր դոյութիւն ունեցած է գեղերու մէջ, մինչդեռ կը մոռնայ Զիֆթէ-Սարաֆի թէ ես, ինչպէս նաև իմ միւս ընկերներս, յայտնապէս նոր ժամանակներու վերագրած ենք այդ ապականութիւնը:

Զիֆթէ-Սարաֆի դարձեալ զիս հակասութեան մէջ դնել կ'ուզէ՝ դարաւոր ըմբռնումներու, նախապաշարումներու ազդեցութեան տակ սեռային բնազդին ալ չափաւորուելու կարելիութեան մասին ըրած հոգեբանական տեսութիւնս հակասեալ գտնելով այն միւս տեսութեան որով հաստատած եմ թէ «մեր բարքերը բնիկ վիճակին մէջ աւելի համարձակ եղած են, աւելի հաշտ ընտանի ճշտումներու հետ և զերծ՝ սխալ ըմբռնուած պարկեշտութեան մը անիմաստ կապանքներէն»: Կ'երեւի թէ հոս համարձակ բարքեր ըսելով Զիֆթէ-Սարաֆի անպատճառ կ'ուզէ հասկնալ սեռային սանձարձակ յարաբերութիւնները արտօնող բարքեր և կ'եղրակայնէ թէ քանի որ մեր բնիկ բարքերը համարձակ եղած են՝ ուրեմն հինէն ի վեր մեր բարքերը աւրուած են և հակասական է սեռային բնազդի չափաւորման խօսքեր ընել ալ ևս, եւլն: Ժիշտ կ'ըլլար այս տեսակ եղրակացութիւն մը, եթէ ես ալ «համարձակ բարքեր» ըսելով նոյն բաները հասկնայի, բայց Զիֆթէ-Սարաֆի չեմ գիտեր ինչո՞ւ նկատողութեան չառնել «սխալ ըմբռնուած պարկեշտութեան մը անիմաստ կապանքներէն զերծ» բացատրութիւնը որով յատկանշած եմ գիւղական բարքերը և որ բնաւ երկդիմութեան տեղի չի թողուր: Արդե՞հօք սեռային յարաբերութեանց սանձարձակութիւնն ալ սխալ ըմբռնուած պարկեշտութեան մը անիմաստ կապանքներէն զերծ բարքեր կը համարի Զիֆթէ-Սարաֆի... և թէ այդպէս չէ՞, ուրեմն կրնար հասկնալ թէ ես համարձակ բարքեր ըսելով որոշակի ակնար-

(*) Տե՛ս օրաթերթ Մասիս 1898 տ. թիւ 61-62. «Սորթացման ախտանշիւր գաւառական բարքերու մէջ»:

կած եմ քաղաքացի կանանց շատ տեղեր զը-
լացուած եւ գեղերու մէջ արտօնուած կարգ-
մը օրինաւոր թոյլտուութիւններ, ինչպէս են՝
երկու նշանածներու զիրար տեսնելու թոյլ-
տուութիւնը, էրիկ մարդերէն չփախչելու,
այր եւ կին խառն զուարճանալու, միա-
սին երգելու, պարելու եւ այլ նմանօրինակ
յարարերութիւններու մասին վայելած համար-
ձակութիւնը: Արդէն այս կարգի յարաբերու-
թեանց մէջ ի՞նչ կայ անբարոյական որ իրա-
ւունք տար մեղի հետեւցնելու թէ մեր հին
բարքերն ալ անբարոյական եղած են, մինչ-
դեռ այսօրուան խնդրոյ առարկայ եղած ա-
պականութիւնները կարծեմ ասոնցմէ շատ
տարբեր են եւ ես չեմ կրնար երբեք ընդու-
նիլ թէ մեր բնիկ բարքերը հինէն ի վեր նը-
մանօրինակ ազտտուութիւններ պարտկած ըլ-
լան. ուրիշ բան է թէ ամէն ատեն ալ կըր-
նան գտնուած ըլլալ բացառիկ յոռի տիպաբներ:

Այսպիսի մը բացատրութիւն կարծեմ բա-
ւական է հաշտեցնելու կարծեցեալ հակասու-
թիւնները:

ՅՈՎ. ԳԱԶԱՆԾԵԱՆ

Ջ Ե Ր Մ Ը

Ջերմը կ'այրէ հեգ մարմինը՝ ուժաքափ
Պրկուսմեքով խոտանգող
Բարձին վրայ կ'իյնայ հակասա հրաքապ
Ստուերին մեջ կիսաաօդ:

Ո՞ն հիւանդ եմ, կը գառանցեմ ցաւագին,
«Հիւանդ» եւ անկէ հեռուն
Եւ այդ «հեռուն» մտիս սխուր նուագին
Յանկերդ մը կ'ըլլայ անհուն:

Հոգիս ցնցող յանկերդ, ցաւաւ ու երկար,
Որ մտիս մեջ տարուցակ
Կը դարձարձե՞ծ ծփանքներով ցաւագար,
Անհասնում ու սխուրնակ:

Այդ «հեռուն»ին սարսուռին մեջ ջլատող,
Բոցի մը պէս նորարած,
Կը սասկանան կսկիծ, ցաղմապ, տենդ ու դոդ
Բորբոնումով մ'իյնալեարծ:

Սակայն մարմինս այսող տենդը ոչինչ է
Այն բոցին փոխ՝ որ հոգիս
Կը մրկէ, կը լափկիզէ, կը ջնջէ
Քու կարօսվորդ, հոգի՜ս...:

Վ.

“ՈՐՔԱՆ ԴԻԻՐԻՆ Է ԵՂԵՐ,”

(ՇՈՐԱՎԷՊ)

Ի՞նչը,—պիտի հարցունես զարմանքով,
Քիչ մը չփոխած, սիրելի մայրս:

Մի՛ աճապարեր, սպասէ՛ որ պատմեմ:

Քեզի կը գրէի անցեալ անգամ որ, ա՛լ
առջի պէս չեմ սիրեր Հէլէնը: Պիտի ըսես որ
խենթեցեր եմ, սիրելի մայրս. չէ՛, անիրաւ-
ութիւն մի՛ ըներ, դուն ալ պիտի համոզուիս
հիմա:

Երանի՛ թէ քիչ մը նուազ սիրէի զայն,
սիրոյս մէջ նուազ կրակ ու տարփանք դրած
ըլլայի, երանի՛ թէ այնքան կատարեալ չը-
գընայի զինքը, թերութիւններն չմարած ըլ-
լայի իր դէմքին ազուրուրութեանը ու շնորհ-
ներուն հրաշալիութեանը մէջ, ‘օհ, թերեւս
այն ատեն երջանիկ ըլլայի, թերեւս սիրէի
միշտ զայն, կեանքիս մէջ, մինչեւ վերջը:

Ինձի այնպէս կուգար որ պիտի չձանձրա-
նամ անոր քով երբեք, սիրելի մայրս. կը
կարծէի որ յաւիտենապէս անգործ վիճակ մը
պիտի ունենամ, զերծ՝ ամէն տեսակ անհան-
դըստութիւններէ, հոգերէ, վրդովմունքներէ,
տառապանքներէ. ա՛լ պիտի չերազէի ընաւ,
քանի որ դատած էի, քանի որ ձեռքիս տակ
ունէի այն գեղեցիկ ու պաշտելի էակը որուն
համբուրելի, մաքուր էութիւնը զիս կը գի-
նովցնէր, զիս կը անդգոտէր ամէն կերպով:

Այս ամէնը դուն աղէկ կը հասկնաս, շատ
լաւ կ'ըմբռնես, սիրելի մայրս. ասոր վըս-
տահ եմ:

Միշտ իր վրայ կը մտածէի, ամէն բանէ
վեր կը դաւանէի անոր հոգին: Շուրջի մը թ-
նուրտիս մէջ անոր փափուկ, հեշտազրդիւ
չունչը կը վնասէի, ու այն աննիւթ եւ ար-
փաւէտ գաղափարները, որոնք անոր մտքէն

կը ծնէին, իւրացնելու հետեւ ջանք մը կ'ընէի, իրեն նմանելու, իր հրեշտակային բարութիւնն ու գերմարդկային չնորհալիութիւնը ունենալու համար: Եւ գիտակցաբար կը դադարէի որ անկէ զատ ո'չ մէկուն պիտի կրնայի սէր նուիրել, անով ապրիլ, անոր մէջ, անոր կեանքին մէջ մխրձուիլ կ'ուզէի ամէն վարկեան, միեւնոյն օդը, միեւնոյն կեանքը չնչնելու համար: Իր սիրտը ըզձանքներու, մոգական բաղձանքներու տաճար մըն էր կարծես որուն մէջ լուսօրէն փակուած՝ պաշտօն մէն արքիւ՝ ինքզինքիս հետ առանձին, կ'երգէի անդու, քաղցր երջանկութիւններուն ու ներամիտի մտերմութիւններուն հետոտութիւնները կ'երգէի անդադար: Բայց խաբուած չեմ երբեք, նորէն ան առջի պէս կը սիրէ զիս, սիրելի մայրս. ամէն անգամ զիս տեսնելուն, աչքերը կ'արցունքոտին: Յանցաւորը ես եմ թերեւս:

Տուներնուս մէջ ձայն չես լսեր հիմա: Դուռներուն բացօղիքն ու դռնօղիքը կը լսես ամէն վարկեան, չարաշուք գործողութեան մը պէս: Աչքերովս անոր կը հետեւիմ միշտ. ու կը զարմանամ անձիս վրայ. յուսահատ վիճակ մը առած է ան, մինչդեռ ես հիւանդի մը տագնապնդումով կը ցնցուիմ. վար կ'իջնայ, ու առանց իր փնտռածը առնելու, վեր կուգայ դարձեալ ու կ'ըսէ տարտամօրէն. «Ա՛խ, ինչ պիտի բերէի...»: Յետոյ ինծի կը նայի, ես որ իբր թէ ուրիշ բաներով զբաղած կ'ըլլամ ամէն առիթ: Միտքը չփոխ վիճակ մը ստացեր է. միեւնոյն բանը օրը գրեթէ հինգ անգամ կը կրկնէ. ու ակնարկներուն հրեղէն արտայայտութեանը մէջ, իր շարժումներուն, իր կերպարանքին մէջ, պահ մը կը կարծեմ որ երազի կեանք մըն է որ ապրած եմ մէկ քանի շաբաթ, թէ կը սիրեմ զայն նորէն, նոյն առջի պաշտօնովը, խալայեղումներովը, նոյն առջի յափշտակութիւններովը, սրտազեղումներովը: Ի՛նչ տափակ է սա կեանքը: Վարկեանի մը մէջ կը փոխուիս, ու այն բանը որ քեզի համար նմանը չունէր տիեզերքին մէջ, աստիկ կը դառնայ աչքիդ: Զգացումներուն ամէնէն անձնականին ունայն մը ըլլալը կը զգաս, միտքդ շատ բաներ կ'անցունես, կ'ուզես մօռնալ ամէն ինչ, ու չես կրնար:

Ա՛հ, գիտե՞ս որքան կը սիրէի առաջ Հէլէնը: Ինչե՛ր կը մտածէի անոր վրայ, զինքը երջանկացնելու համար ամէն բան միտքէս կ'անցունէի, մինչև անգամ երբեմն մենէ բարձր դասակարգերուն վրայ վերապահութեամբ կը խօսէի. չըլլայ որ, կ'ըսէի, տխրի, պղտիկ, կանացի ընդվզումներ ունենայ, որոնք հետզհետէ աւելի լայն համագամանք մը առնելու բնոյթը ունին: Այն գիրքերը կը յանձնարարէի իրեն կարգալ, որոնց մէջ տիպարները երջանկութիւնը բուն իսկ իրենց գիտակցութեանը մէջ կը փնտռեն, կարելիին կը բաղձան միայն, աւելիին տեսնչալու պատրուակով կեանքներին չեն մաշեցնենք: Եւ ասոնց նման շատ մը մտածութիւններ, խորհուրդներ, Հէլէնը կատարելապէս իր վիճակին մէջ դո՛հ ձգելու համար:

Բան մը չըրաւ աղջիկը: Ո՛չ անիրաւութիւն, ո'չ ալ անհաւատարմութիւն կայ գործին մէջ, ա՛խ, չես գիտեր, սիրելի մայրս... Բայց ես ա՛լ հիմա այդ գաղափարներովը չեմ չարչարեր անձս, թերեւս շատ սիրելուս պատճառով է որ կը տանջուիմ այսօր, և այդ սիրային մոլեգնոտ չափազանցութեանս երեսէն է որ Հէլէնէն պաղեցայ...

Ինչպէ՞ս ըսեմ, Աստուած իմ...

Սիրոյ պէտք ունիմ, ապրելէ առաջ սիրել կ'ուզեմ. Հէլէնի համար սէրը աննիւթական, մաքուր, փաղփուռ զգացում մըն է, մինչդեռ ինծի համար միեւնոյն բանը ըլլալէ առաջ և ետքը՝ ուրիշ բաներ ալ է: Կ'ուզեմ որ աշխարհիս վրայ իրարմէ զատ ուրիշ ո'չ ոք սիրենք, կ'ուզեմ որ իրարու համար ապրինք միայն, կ'ուզեմ անոր գրգանքներուն ու փաղաքանքներուն անհուն քնքշութիւններուն մէջ թաղուիլ, ուր աչքերս փակ, իր ոտքերուն տակ, տարփանքի այդ գլինովութեանս մէջ, պիտի քնանայի յաւիտենապէս, ա՛լ պիտի չարթննայի երբեք այդ կապոյտ ու մետաքսաւէտ երազանքէն: Կատաղի համբոյններովս այրել կուզեմ անոր ծոծրակին ու ճակատին մարմարի սպիտակութիւնները, ներքին, հոգեկան հրաշքներուն բովանդակ թափովը անոր չըթուանքներէն կ'ուզեմ ծծել հեշտութեան ու սարսափի այն դաշնաւոր չնչատուութիւնը, որ կը մեզկայնէ զիս, որ կը թուլցնէ կ'երջանկացնէ զիս:

Բայց... ըսե՞մ արդեօք...

Աստուք անանկ խնդիրներ են, զորս պէտք է որ գրէի քեզի, սիրելի մայրս։ Սակայն որո՞ւ կ'ուզէիր որ գրէի, ո՞վ կրնայ զիս մը-լսիթարել, ո՞վ կրնայ սիրային այսքան փա-փուկ խնդիրներու մէջ ընկերի դեր կատա-րել։

Պիտի ծաղրես զիս... գիտեմ... վստահ եմ։

Ինծի համար Հէլէնը ա'լ առջի պաշտելին ըլլալէ դադրած է կարծես. կը սիրեմ զայն՝ պարտականութեան մը, ամուսինի սիրով. ուր մնացին առջի տենդոտ համբոյրները։ Ան հրապոյրը դնաց, առջի երազային էակը, հիմա յարգանքի առարկայ մը դարձած է լոկ. ամուսնանալէս ամիս մը ետքը զգացի ա-սրկա։

Այնքան յափշտակութիւններէ, խնկար-կումներէ, հասնումներէ, լլկումներէ վերջը, հէ՞, ո՞րքան դիւրին է եղեր պաղիւը, մէկէն ի մէկ, գրեթէ առանց ուղեւոր, ըսէ՛, ո՞ր-քան դիւրին։

Մի՛ ցաւցուներ սիրտս, չեւէս գրես ինծի որ «թող չամուսնանայիր, ի՛նչ ընեմ», ինչ-պէս կը գոչեն շատ մը դժգոհ ծնողքներ։

Նամակս գրած միջոցիս վարի յարկն է Հէլէն։ Վարկեանէ մը վեր պիտի գայ, և զիս ճաշի պիտի հրաւիրէ։

Ախ, ի՛նչ տախիկ է սա կեանքը, Աստ-ուած իմ։

Ընդօրինակեց

ՄԱՌԻ ԵՈՎՀԱՆՆԷՍՅԱՆ

ԼԵՒՈՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ՄԵՐ ԵՒ ՕՏԱՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒՆ ՎՐՈՅ

Ե ԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Քիչ շատ համոզուելով թէ «արուեստը գործ-նականութեան ուսում մը չէ, այլ գաղափա-րական ճշմարտութեան հետադիւրում մը» պէտք է մշակել բանաստեղծութիւն մը որ արուեստի ամբողջութիւն մը ու,—առանց վարդապետական շեշտի,—գոհար խորհուրդ

մը ըլլայ, հաշտեցնէ մարդը իր տիեզերքի Աստուծոյն հետ, ցուցնէ կեանքի ուղիղ շա-ւիղ մը։ Բանաստեղծութիւն մը որ գեղեցկին ճաշակը զօրացնէ, բանաստեղծութիւն մը որ ժամանակին պահանջներէն աւելի՝ պատմէ յաւիտենական ճշմարտութիւններ, որ վայելք մը ըլլայ ինքնին, փոխուի նիւթականէն ան-նիւթին, միւս արուեստներուն պէս։ Նշանա-ւոր խորհող մը կ'ըսէ թէ ինչ որ կը գտնուի երկինքը, կա՛յ երկրի վրայ՝ երկրային ձեւով մը, և ինչ որ կը գտնուի երկրի վրայ՝ կա՛յ երկինքի մէջ՝ երկնային ձեւի մը տակ։ Բա-նաստեղծին ու գիտունին աչքը մեզի պիտի ցուցնէ երկրի վրայ, բնութեան մէջ, մար-դուն մէջ ինչ որ երկնային է։ Բանաստեղծու-թիւնը սփոփանք պիտի տայ կեանքի ձախող օրերուն։ Ան արեւ մը պիտի ըլլայ կեանքի մթին ու խորհրդալից անդունդին վրայ ծա-թած, արեւ մը որ տառապանքի մէջ ծաղիկ փթթեցնէ ու անուշ բուրումով պարարէ լը-կուած միտքն ու հոգին։—«Բանաստեղծու-թեան մէջ միայն իրապէս մեծը և մաքուրը կը յառաջացնէ զմեզ ու ան գոյութիւն կու-նենայ,—իբր երկրորդ բնութիւն,—կամ մեզ իրեն բարձրացնող, ձգող և կամ զմեզ լքող (Вдох)»։

Պէտք է մշակել բանաստեղծութիւն մը որ կիրքը արտայայտուի իր բազմազան ձեւերով, տաղաչափուած լեզուի մը չնորհներով, կեն-դանի, բնական. թեւ առնող պատկերը, կեանք չնշող բացատրութիւնը խառնուի սահուն, քնքուշ, և խոյանք ունեցող սողերու։

Լո՛կ յանգով բանաստեղծութիւն չըլլար։


Զէ՞ մի որ մեր գրողներուն մէջ ալ չեն պակսիր արձակ, անյանդ բանաստեղծութիւն արտադրողներ։ Կարգացէ՛ք մեր հաւնուած գրողները։ Պերճախօս օրինակներ են անոնք. խորհուրդ, ուշադիր դիտողութիւն։ Հոգեբա-նական հայեացք, յուզում, արուեստ, սէր յորդող։ Բանաստեղծութիւնը, կ'ըսէ իմաս-տասէր մը, անդհահատելի է իբր առանձին, որոշ հաւատք մը, մեկին բողոք մը՝ անհա-ւատութեան ալմկալից դուռումին մէջ։ Ե-թէ անգամ մը կարենայինք ըմբռնել խորուն-կութիւնը աս խօսքերուն, չպիտի նեւտէինք

հրապարակ, զեղծելու համար ադ հաւատքը, անոր ազդուութիւնը և ոյժը չի կոտորելու համար: Բանաստեղծութիւնը թէ՛ լոյս է, թէ՛ խօսք ու խօսք եւ լոյս երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ: Եւ անոնց պատճառի չէ այդ: Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է: Եւ խօսքն ալ միտքին լոյսն է: Տիեզերքը մտիկ կ'ընէ և կը պատասխանէ: Յաւանական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան և հոգիին միջև: Եթէ հոգին չըթարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միտքը կ'ըսէ, այդ չհասկցուած միջին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար (Ժ. Միշլէ):»

Ուր էր թէ ունենայինք քերթողներ որոնք «ժամանակը հոգիին կեանքը» նկատուլով՝ անդու ճգնէին հանդիսանալու գրական արուեստագէտներ ու գրական աշխատաւորներ, — արուեստը մշակող ու բարոյականը լըսիկ ազդեցութիւններով զարգացնող:

ԵՐՈՒԱՆԴ ՄԵՍԻԱԵԱՆ

Կ Ը Զ Ն Ա Ն Ա Յ



Կը քննայ իր մեղիութեան մէջ հանդարտ, հաղադ ինչպէս ին մ'իրիկուան մէջ խորին կարծես հեռուէն վարդապոյն ամպ մըն է հարթ Փռուած երկայնքն իր ծուլանքին երեւին:

Կը քննայ իր կիրքերուն ձայնին հետ, Աղօսանքին մէջ յոյգերուն հիւսուածքին. Եւ մօրքին տակ հեզ հառազայթ մ'է՛ անհետ, Ինչ որ Տենչը պստգեհ մէջ երակին:

Կը քննայ. այսպէ՛ս կ'ուզէր ամեն բան Ընդարձակ թիւն, հոսք ծաղկին՝ բանձը ու
սալ

Շոգին հեռակ ծոյլ՝ երկինքին լուրքեան Որով ամպերն ու գմբէքներն են սասալի:

Այսպէ՛ս կ'ուզէր աւելը պարզ ու վսեմ, Դստին հոսք՝ փռուած անուշ մը զերթ ձիւն հուլ տեղալով իրիկանգորհ հովսին սեմ Ուր սիրէին քաւալուն շուքն ամպերուն:

Կը քննայ, ա՛հ, գեղեցիկ է այս քուն, Դեղեցիկ է հուր ամպի պէս անխիւրս, Ծիրանեհեւ ու քափանցիկ ու լուրն Ուր կ'ողողէ լոյսն երակներն ու իր սիրս:

Ծիրանեհեւ ինչպէս անհուն վերջալոյս, Ու քափանցիկ ինչպէս գոհար մը ծովու, Լիւն ինչպէս Բնութիւն մը ինքնաբոյս Ուր, լուր, հրեւի բոլոր գաղտնիքն հեզ աղու:

Եւ նախանձիմ լոյսին որ զայն կ'ողողէ, Մտիկ կ'ընէ երակներուն բանուածքին. Դաւանակութեանն այդ երկինքն ու հողէ Ուր անմասոյց ինձ կը ժպտի՝ կնոջ հոգին...:

Ե. ԳՕԼԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՕՓԵՐ

— 0 —

Կայս. շնորհ. — Դոհութեալը կը ծանուցանենք թէ Վեհ. Կայսրը բարեհաճեցաւ Ա. կարգի Մէճիտիէ պատուանշան շնորհել Սեբաստիոյ առաջնորդ Տ. Պետրոս արքեպիսկոփ և Դ. կարգի Օսմանիյէ՝ Արմաշի փոխ-վանահայր ու Դպրեվանքին վերատեսուչ Տ. Եղիշէ եպիսկ. Դուրեանի ինչպէս նաև Ռօտօսթոյի առաջնորդ Տ. Ներսէս եպիսկ. Ասլանեանի: Նոյնպէս, Դ. կարգի Մէճիտիէ՝ Մուշի Պատր. Փոխանորդ Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեանի և Տնտես. Խորհրդոյ անդամ Սարգիս Էֆ. Տանձիկեանի: Միւթէմայիլի աստիճան՝ Աղգ. Պատրիարքարանի Ա. դործակատար Արիս Էֆ.ի, Ուսումն. Խորհրդոյ անդամ Պետրոս Էֆ. Կարապետեանի և Տնտես. Խորհրդոյ անդամ Միհրան Էֆ. Շիրինեանի: Դ. կարգի Մէճիտիէ պատուանշան՝ Պատրիարքարանի քարտուղարներէն Տիգրան Էֆ. Նշատաճեանի, Բերայի Թաղ. Խորհուրդի Ա. քարտուղար Միքայէլ Էֆ. Բաքմաճեանի, Մայր եկեղեցւոյ Թաղ. Խորհուրդի Ա. քարտուղար Բարթող Էֆ. Հիւնքեարպէ՝ յէնտեանի, և Մկրտիչ Էֆ. Պէղազեանի:

Մուշի Պատր. Փոխանորդ Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեան մօտ օրէն կը մեկնի իր պաշտօնատեղին: Իր նախորդը, Տ. Խոսրով Ծ. Վրդ. Պէհրիկեան Խարքերդ հասած և իր առաջնորդական պաշտօնն ստանձնած է արդէն:

Ս. Էջմիածնէն կը հաղորդեն թէ Ս. Հայրապետը ճամբորդութիւն մը ընելու համար ըստ օրինի արտօնութիւն խնդրեր է Բեղերսպուրկէն: Մինչև սեպտ. 6 ղեռ պատասխան առնուած չէր: —Վերջին ժամանակներս բաւական թուով եւրոպացի գիտնական ճանապարհորդներ այցելել են Էջմիածին: Միւս ռոնօրհնութեան հանդէսին ներկայ գտնուել են քանի մը գերմանացի պօսաշրջիկներ որոնք հիացումով դիտել են իրենց համար տարօրինակ եղող այս կրօնային շքեղ հանդէսը:

Երուսաղեմի գործեր. — Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը՝ ի պատասխանի Կեդր. Վարչութեան պաշտօնագրոյն՝ ծանուցեր է թէ Վարչութեան որոշումը հաղորդել է Տ. Դեռոնդ Վրդ. ի որ ինչպէս ասկէ առաջ ալ քանիցս խնդրած էր, պատրաստակամութիւն յայտնել է անմիջապէս Պոլիս գալու, սակայն ինք՝ Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը աչքի առաջ ունենալով Ս. Աթոռոյ գործերուն և խնդիրներուն՝ փափուկ վիճակը և ելեւմտից Տեսչին բացակայութեան վիճակը, մանաւանդ մեծ ստիպողութիւն ունեցող կալուածական տրոյ խնդիրը, հաւանութիւն չէ յայտնել անոր Կ. Պոլիս գալու փափագին և որոշել է Կ. Պոլսոյ իր փոխանորդին Տ. Գէորգ եպիսկ. Երէցեանի յանձնել՝ յանուն Տնօրէն Ժողովոյ պէտք եղած բացառութիւնները տալ Կեդր. Վարչութեան: Բիւզանդիոն, ուսկից կը քաղենք սոյն տեղեկութիւնը, կը յաւելու թէ Երուսաղեմի Ս. Պատրիարքը սպա հաղորդել է Կեդր. Վարչութեան որոշումը Սանատարեան Տ. Յակոբ, Աճէմեան Տ. Սարգիս և Տէրտէրեան Տ. Դաւիթ Վրդ. ներուն որոնք յանձն չեն առել Կ. Պոլիս գալու, աւարկելով թէ մինչև որ Տ. Դեռոնդ Վրդ. չերթայ՝ իրենք ալ չեն երթար: Տ. Յարութիւն Ս. Պատրիարք, Հայրը իր նամակովը կը յաւելու թէ ինք աւելորդ և անսեղի դատած էր վերջերս յարուցեալ խնդիրները, վասնզի նախորդ խնդիրներն արդէն վերջացած էին և բուն խնդիրն այժմ լուսարարագետի ընտրութիւնն է: Յունիս 16ին, Միաբանական Ժողովը գումարուել և ի ներկայութեան Ն. Սրբաշնութեան՝ առե-

նայն օրինաւորութեամբ ու խաղաղութեամբ ընտրութիւնը կատարուելով՝ արդիւնքը եղած էր Տ. Վահրամ Վրդ. ի ընտրութիւնը իրեն լուսարարագետ: Քուէարկութենէն առաջ ինք՝ Ս. Պատրիարքն՝ ու Ատենապետը յորդոր կարգացել են ընտրողներուն՝ խղճի մտօք կատարել և հրաւիրել են Ժողովականներն իրենց դիտողութիւններն ընելու, եթէ ունին: Բայց, ո՛չ ընտրութենէն առաջ ո՛չ ալ ետքը դիտողութիւն տեղի չէ ունեցել: և Ս. Պատրիարքը յատենի Ժողովոյ չնորհաւորելով կատարուած ընտրութիւնը, հաստատել և անմիջապէս հեռագիր պատրաստել տալով ուղղել է նորընտիր լուսարարագետին:

Մեր պաշտօնակիցը՝ Երուսաղեմի գործերու մասին իր հաղորդած սոյն տեղեկութիւնները կ'ամբողջացնէ հաղորդելով նաև թէ հաշիւներու մասին յանձնարարուել է Ելեւմտից Տեսչին՝ համարատուութեան տեղեկագիրը պատրաստել, որպէսզի Միաբանական Ժողովին ներկայացուի և վաւերացուի ասկէ, ինչպէս վաւերացուած է արդէն Տնօրէն Ժողովէն:

Սոյն պատասխանագիրը պիտի ներկայացուի Կեդր. Վարչութեան Սառն Ժողովին:

Պատրիարքարանի շրջանակներուն մէջ կ'ըլլուի թէ Կ. Պոլսէն Վարչական քննիչ մը կամ քննիչ մարմին մը պիտի զրկուի Երուսաղեմ, պէտք եղած լուսարարութիւնները ձեռք բերելու և խնդիրը տեղւոյն վրայ ուսումնասիրելու համար:

Նշանախօսութիւն. — Հաճոյքով կը ծանուցանենք թէ նախորդ շաբթու Ռօտօսթոյի առաջնորդարանին մէջ տեղի ունեցել է Տիգրան էֆ. Պաղտիկեանի նշանախօսութիւնը Օր. Երանուհի Յովհաննովիկի հետ: Պաղտիկեան էֆ. մինչև վերջերս արդիւնաւորապէս կը վարէր քաղքին՝ Յիսուսեան աղգ. երկսեռ վարժարանին տնօրէն-դաստիարակի պաշտօնը, և Օր. Երանուհի՝ Ս. Յովնանեան վարժարանին այս տարուան շրջանաւարտներէն է ու տոհմիկ ընտանիքի մը ղաւակը: Պաղտիկեան էֆ. ազնուաբար կը վարէ Սրբեկի ու Մասիսի գործակալութիւնը Ռօտօսթոյի մէջ և միշտ օգտակար հանդիսացած է: Մեր խնդակցութիւնները կ'ուղղենք այս նշանախօսութեան առթիւ:

ԼԻԼԻԵՆ ՄՕՐՐԻՍ

(LILLIAN MORRIS)

3.

Գրեց ՀԷՆՐԻԻ ՍԷՆՔԻԷՎԻԶ.

Թարգմ. ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՅ.

Խեղճ հրեշտակ, իր սիրտին մինչև խորը վիրաւորուած էր անողորմ պատասխանէն որ միեւնոյն ատեն խորունկ արհամարհանք մը կը բուրէր, — և սակայն շատ հեռու էի ազնուականութիւն ծախելէ: Նախանձէ բռնուած էի պարզասկէս, և հիմա որ այնքան տարաբաղդ վիճակի մը մէջ կը տեսնայի զայն, վիզէս բռնել և ինքզինքս խղիւղելու կուգար: Իր ձեռքերը առի ձեռքերուս մէջ և ըսի աշխուժով.

— Լիլիէն, Լիլիէն, չի հասկցաք ըսածս: Աստուած թո՛ղ վկայ ըլլայ որ, անպարծուութիւնով չէր որ խօսեցայ: Նայեցէք, աս աշխարհիս մէջ, ևս այս երկու ձեռքերէս զատ բան չունիմ... Այնուականութիւնը իմ ինչչո՛ւս պէտք: Ինծի ցաւ պատճառողը և ձենէ հեռանալուս անդի տուողը, ուրիշ բան էր: Բայց չի կրցայ դիմանալ ձեր արցունքներուն: Կ'երգնում ձեզ որ իմ խօսքերս ձենէ աւելի վիշտ պատճառեցին ինքզինքիս: Երբեք անտարբեր մը չեմ կրնար ըլլալ ևս ձեզի համար, Լիլիէն: Այդ պարագային, ինչ որ կուգէք կրնաք խորհիլ Սէմիսընի մասին, պիտի չի վրդուլուէի ընաւ: Պարկեշտ տղայ մըն է ան, բայց հոտ չէ խնդրը: Կը տեսնաք որ ձեր լացը որչա՛փ կ'ազդէ ինծի. ձեզի արցունք թափել տալուս համար, անկեղծօրէն ներողութիւն կը խնդրեմ:

Այս ըսած ատենս, բռնեցի իր ձեռքը և չրթունքիս վրայ տանելով սեղմեցի. բարձր յարգանքի այս արտայայտութիւնը և խնդրանքիս մէջը հնչող համոզիկը չեղաւ, քիչ մը հանդարտեցուցին զայն: Իր լացը չի դադարեցաւ անմիջապէս, բայց իր արցունքները նուազ դառն էին և ժպիտ մը շողշողացուց զանոնք, ինչպէս արեւի ճառագայթ մը պիտի ընէր՝ թանձր մառախուղը ծակելով: Բան մըն ալ կուրծքիս տակը կը յուզուէր և չէի կրնար խռովքս զսպել: Խորունկ խանդաղա-

տանք մը սիրտս կը պարուրէր: Կը քալէինք անձայն, և մեր շուրջը տալէն բան, բովանդակ աշխարհ քաղցրօրէն կը ժպտէր մեզի:

Բայց օրը իրիկուն ըլլալու վրայ էր, օդը սքանչելի էր և թեթեւօրէն զովացած մըթնոլորտը տակաւին այնչափ ողորուն էր լոյսով որ, բովանդակ մարգագետինը, բամպակենիի թփիկներու համախմբումները, մեր վաչկատարմին վակօնները և դէպ ի Հիւսիս թեւող վայրի սագերու ձախրերը, վարդադոյն ոսկիով լուսավառուած կը թուէին: Նոյնիսկ ամենաթեթեւ հով մը չիկար որ իր շունչովը դար շարժեցնէր խոտի ծիւերը. հեռուէն՝ Սէտար Ռիլըրի յորձանքներուն ժխորը, և բանակետէն՝ ձիերուն վրնջիւնները կը լսուէին: Կը փափաքէի նորէն բռնել Լիլիէնի ձեռքը և զայն չրթունքիս վրայ պահել երկարօրէն, բայց կը վախնայի զայն նեղացնելէ: Ան, քովէս կը քալէր, խաղաղիկ, քաղցրադէմ ու երազուն: Արցունքները չորցած էին արդէն, երբեմն իր լուսաչող աչքերը վեր կը վերցնէր և խմբներուս կը յանդէս: Սկսանք նորէն խօսակցիլ, և այդպէսով կարաւանին հանգստավայրը հասանք:

Այդ օրը, որ ինծի համար այնքան յուզումնալից եղաւ, շատ ուրախալի վերջաւորութիւն մը պիտի ունենար, ինչու որ մեր մարդիկը՝ ամբողջ գեղեցիկ օդին զուարթութիւնովը համակուած, բայց թեւայ հանդէս մըն էին կաղմակերպեր: Սովորականէն աւելի առատ ընթրիքէ մը ետքը, վառուեցաւ խոշորիկ կրակ մը որուն շուրջը պարերը պիտի դառնային: Հէնրի Սէմիսըն խուզած էր խոտը ընդարձակ չրջանակի մը վրայ և զայն ծածկած՝ գետեղրէն բերած աւաղովը: Երբոր այսպէս պատրաստուած հրապարակին վրայ բոլոր հանդիսականները ժողովուեցան, Սէմիսըն՝ ընդհանուր հիացումի մէջ և հնդիկներուն սրինգներովը ընկերացած, սկսաւ

սրնքապար (gigue) մը դառնալ։ Ձեռքերը կախ, մարմինը անշարժ, ոտքերը՝ մասններուն ծայրովը ու կրողներովը հարուածներ տալով այն աստիճան ճապուկ արագութիւնով մը կը շարժուէին որ, մարդ գոռարութիւն կը քաշէր աչքերով անոնց յարատեւ շարժումներուն հետեւելու։

Սրինգները կը սուլէին յիմարաբար. յանկարծ երկրորդ պարող մըն ալ եկաւ մէջտեղ, ետեւէն երրորդ մըն ալ, չորրորդ մըն ալ և հրճուանքը ընդհանուր եղաւ։ Ունկնդիրները երաժիշտներուն կ'ընկերանային ասպագայ ոտ կ'ին լուալու սահմանուած սաններուն հարուածներ տալով, կամ եղանակին համաչափութիւնը կը շեշտէին, մասներնուն մէջ բռնած կովի կողոսկրի կտորներով, որոնք այդպէսով բաւական կը յաջողէին նմանցնել բանբիւրն ձայները։

Յանկարծ, բովանդակ իջեւանը խուլցնող աղաղակներով թնդաց։

— Մինսթրէլները, Մինսթրէլները։

Մեր երկու հնդկիները, ձիւմ և Քրաու, կրկէսին մէջ նստուեցան։ Ձիւմ՝ օձի մորթով շինուած պղտիկ թմբուկ մը ունէր ձեռքը. Քրաու ալ, վերոյիշեալ կովի տափակ ոսկորի կտորները։ Պահ մը իրար դիտեցին, աչքերնուն ձերմակը թաւալցնելով սոսկալի կերպով, յետոյ սկսան երգել հնդկ կերգ մը, որ ոտքի հարուածներով և բովանդակ մարմինին բռնած ոտտուներով կը միջոցէր։ Այդ երգը երբեմն վայրագ, երբեմն տրտում բան մը ունէր. ամէն մէկ երգամասը վերջաւորող «Տի-նահ, ահ, ահ» բառերը, շատ չանցած հըզօր աղաղակի մը կը փոխուէին, անկէց ալ վայրի գաղանի տեսակ մը մոնչիւնի փոխուելու համար։ Պարողները սրջափ կը գրգռուէին ու կը խանդաւառուէին, իրենց շարժումներն ալ այնչափ այլանդակ կ'ըլլային, և վերջապէս իրարու գանկի սկսան անանկ ուժով հարուածներ տեղալ որ եթէ անոնց տեղ եւրոպական գլուխներ եղած ըլլային, ասպահովաբար կաղնիներու պէս պիտի կոտորած ըլլային։ Կրակին ցոլքերովը լուսաւորուած ու անկարգ ոտտուներով խոցացող սև այդ մարմինները իսկապէս ցնորական տեսիլքի մը

հանդիսատես կ'ընէին մեղի։ Իրենց ոռնացող աղաղակներուն, թմբուկին, սրինգներուն, սաններուն աղմուկին ու ոսկորներուն ընդհարումին կը խառնուէին ուշիւզվէրի հարուածները և հանդիսականներուն գոչերը. «Հուրաւ, ձիւմ, հուրաւ, Քրաու»։

Երբոր վերջապէս, հնդկիները ոգիսպառ, գետնը ինկան, սկսան հեւալ ու խորթալ, առանց կարենալու շունչ առնել։ Հրաման ըրի որ դաւաթ մը օլի տան անոնց, ինչ որ անմիջապէս ողջնցուց զիրենք և ոտքի հանց։ Բայց այդ պահուն, ամբողջ օրի մը (ճառախօսութիւն) կը պահանջէր։ Ժխորը ու երաժշտութիւնը մէկէն ի մէկ դադարեցան։ Ստիպուեցայ ձգել թեւը Լիլիէնի, որ վակոնի մը կառավարին տեղը նստած էր, և բազմութեան կողմը դառնալ։ Հուժկու լայն ուսերով, մօրուեղ, դանակը մէջքին, լայն ու գրեթէ միշտ պատուած գլխարկով և խարոյկէն լուսաւառուած նկարագրեղ այդ դիմաստուներն երբ դիտած ատենն ինծի անանկ կուգար որ թատրոնի մը մէջ էի և կամ հրոսակներու պետ մըն էի եղած։ Եւ սակայն, բոլոր այս մարդիկը ազնիւ ու քաջարի սիրտեր կը կրէին հակառակ անոր որ տաքնապալի ու վայրենի կեանքեր էին ունեցած ամէնքն ալ։ Եւ հոտ, մենք ամէնքս, կաղմելու վրայ էինք աշխարհի մնացած մասէն բոլորովին անջատ, պղտիկ ու ինքնամիտի տիեզերք մը, որուն ճակատագիրը ընդհանուրին բաղդին էր կապուած և որուն միեւնոյն վտանգները կը սպառնային։ Հոս, մէկուն ուսը միւսին սւսին կը դպնար և ամէն մարդ ստիպողական կերպով կգգար որ քովին իր եղբայրն էր, ինք ալ անորը մեղ չըջապատող անխոխ տարածութիւնները ու անսահման անապատը, իրար սիրել կը պատուիրէին այդ աներկիւղ հանքագործներուն։ Այս արկածախնդիրներուն մէջ, Լիլիէնի անպաշտպան ու անվտանգ երեւոյթը, որ սակայն իր հօրը տունը եղածի պէս խնամքի առարկայ ու լաւ պահպանուած էր, միսթաբական մտածումներ կը ներշնչէր ինծի, ինչ որ անկեղծօրէն դուրս տուի հրապարակով, այնպէս՝ ինչպէս կը զգայի եւ ինչպէս կրնայ զրուցել զօրականներու ու գաղթականներու

պետ մը: Ամէն վայրկեան կ'ընդմիջէին զիս. «Հուրրա՛ւ Բողոնիացին: Հուրրա՛ւ, մեծաւորը: Հուրա՛ւ մեծն Ռալֆոս» . կը ծափահարէին . կը պօռային . բայց ամէնէն աւելի հրճուանք իմացայ, երբ յաղթանակս հռչակող կարկառուն ու լայն այդ ձեռքերուն մէջ տեսայ, խարոյկին նշոյլներէն վարդերանգուած զոյգ մը պղտիկ ու ճերմկոտիկ թաթիկներ որոնք զոյգ մը տատարկնորու պէս կը թռչտէին օդին մէջ: Եւրջս ալէն բան երանութեան փողփողումներով, լուսապայծառ կը շողչողար: Այ որո՞ւ հոգ անապատը, վայրի դազանները, Հնդկները ու ծովահէնները:

— Պիտի յաղթե՛մ ամէն դժուարութեան որ գայ ճամբաս խափանել, կտրուանս պիտի առաջնորդեմ մինչև աշխարհիս անդիլի ծայրը, եթէ պէտք ըլլայ: Եւ Աստուած թող շանթահա՛րէ զիս, թէոր խօսքս չի բռնեմ:

Աւելի ուժգին «հուրրա՛ւ» մը սրատասխանեց այս խօսքերուս և ամէնքը մէկ, խանդավառութիւնով լեցուած, սկսան երգել, զաղթականներուն երգը.

Եկայ անցայ Միտիտին

Եկո՛ւր անցնինք սա Միտուրին

Այն ատեն, ճառիս ելաւ պատասխանել, կարաւանին նախանդամը, Սմիթ, Բէնտլի-վանիայ Բիցպուրկ քաղաքին շրջականներէն հանքադործ մը: Բոլոր ընկերակիցներուն կողմէն շնորհակալ եղաւ ինծի և կարաւանը վարելու ճարտարութիւնս շնորհաւորեց: Սմիթէն ետքը, գրեթէ ամէն վակոնէն մէյմէկ հոգի խօսեցան: Ոմանք մասնաւորապէս զըւարձալի էին: Հէնրի Սէմիսըն մասնաւոր, որ ամէն մէկ պարբերութենէն ետքը կը պօռար.

— Ծէնթմէննե՛ր, կախուելու պատրաստ եմ եթէ չիտակ չէ՛ զրուցածս:

Երբոր ճառախօսներուն ձայները մարեցան, սրինգները ա՛լ աւելի եռանդով սկսան սուլել, սակորներուն բամբիռը վերսկսաւ և սրնքապարը նորէն թափ առաւ:

Մոթը կոխած էր բոլորովին, լուսինը բարձրացած էր երկնակամարին վրայ և այնչափ պայծառօրէն կը փառփողէր որ կրակեալին բոցերը կը դժգունէին իր ճառագայթնե-

րուն տակ. մարդերը ու վակոնները ծիրանի ու դալկահար լոյսերով կրկնապէս լուսավառուած կ'երեւային: Օղը հրաշալի էր: Հանդէսին տարօրինակ ժխորը զօրաւոր հակապատկեր մը կը կազմէր, մարդագետինին խորունկ թմբիրին ու հանդարտութեանը հետ:

Թեւս առի Լիլիէնը և իջեւանին շրջանը ըրինք միասին. մեր յայտածքները փայտակոյտէն զատուելով կը յառէին տափաստանին հեռաւորութիւններուն և կը կորսուէին լուսինին ճաճաճներովը արծաթուած, և ուրուականներու խմբակներու պէս խորհրդաւոր բարձրակարկառ խոսերու մեայլ կոհակներուն վրայ: Միամիտակ էինք: Կրակին մօտ, երկու Սկոտլանդներ, իրենց ինքնայատուկ սրինգներով, իրենց ողբաձայն Պոննի Տրենքին կը չալէին: Կը կենայինք և անձայն մտիկ կ'ընէինք: Յանկարծ, Լիլիէնի երեսը նայեցայ և ան աչքերը խոհարհեցուց: Ես իսկ, ինչ ընելս առանց գիտնալու, բանեցի իր մանրիկ ձեռքը որ թեւիս վրայ կը հանգչէր և տարի երկարօրէն սեղմեցի կործքիս վրայ: Նորասփ աղջկան սիրտը կը զարնէր այնչափ ուժով որ որոշակի կիմանայի ես սողիէն. երկուքս ալ կը դողայինք, որովհետեւ մեր երկուքին միջև կը տեսնայինք մեծնալ, ուռճանալը զգացումի մը՝ որ շատ չանցած ամբողջովին պիտի լիխէր մեր ներսը, և կըզգայինք որ այդ վայրկեանէն սկսեալ, այլ ևս մէկըմէկու համար պիտի չիկրնայինք ըլլալ ինչ որ եղած էինք մինչև այն ատեն:

Իմ մասիս, ես անդիմադրելի հմայք մը կըզգայի, նորածագ այս մտերմութեան մէջ հետդնեալ աւելի ընկղմելով: Կը մոռնայի որ զիչերը պայծառ էր, կրակը կը վառուէր մեր մօտը, իր կարկառուն բոցերովը լուսաւորելով ամէն բան, որ մարդեր կը թափառէին այդ կրակին շուրջը. դու փափաք մը կըզգայի Լիլիէնի ոտքը նետուելու, սէրս բարձրաձայն խոստովանելու կամ գէթ իր չքնաղ աչքերուն մէջ, համակրութեան մը նշանները կարդալու. բայց ան, գլուխը անդին կը դարձնէր և իր գէմքը կըքօղէր մութին մէջ: Կ'ուզէի խօսիլ միեւնոյն ատեն և համոզել զայն, բայց չիկրցայ. ինծի անանկ

եկաւ որ կարկամած կողորդէս ելլալիք ճայնը իմ ճայնէս տարբեր բան մը պիտի ըլլար և կամ եթէ Լիլիէնի ըսէի սա երկնային բառերը. «Կը սիրեմ քեզի» անմիջապէս ետքը յուզումէս պիտի մարէի: Երկուստարդ էի դեռ այն ատեն և նուազ անձնաւորտան: Երեւակայութիւնը չէր միայն որ առաջ կը վարէր զիս, այլ նաև աննկնղ հոգիս և յստակ կերպով կը զգայի որ, եթէ արտասանէի այդ մոգական, այդ սերտօրէն միաւորող բառերը, թանձր պատ մը պիտի քաշուէր անցեալին ու ապագային միջև, և կերպով մը, նոր աշխարհ մը թեւակոխած պիտի ըլլայի: Կը շատայի այն երջանկութենէն որ կ'ընդունարուէր այն սեմէն անդին զոր կը վախնայի գլխի անցնելու: Եւ յետոյ, ո՞վ է ան որ բառերով կ'ընայ դիւրաւ արտայայտել այն սէրը որ շրթութունքներու վրայ չէ որ կը ծնի, այլ սիրտին մէջ ձգած է իր արմատները:

Համարձակած էի Լիլիէնի ձեռքը սեղմել կուրծքիս վրայ. անանկ մնացինք անխօս. չի կրցայ խիզախել իրեն ըսելու չափ թէ որքան արքիւ էր հոգիս, քանի որ ատկէ զատ ուրիշ բանի վրայ խօսիլ խկապէս անկարելի էր ինծի:

Եւ ամէն բան հոտ վերջացաւ: Նայուածքներս, ազօթող, աղերսող մարդոց նայուածքներուն պէս, լուսաւորներուն յստեցան: Վերջէն, մեծ խարոյկին մօտ նստած մէկը կանչեց զիս. վերադարձանք հոն: Հանդէսը վերջացած էր. գաղթականները երթալ հանգչելէ առաջ հոգեւոր տաղերգութեան մը կը ճայնակցէին: Բոլոր էրիկ մարդիկ գլուխնին բացին ու թէև մէջերնին տարբեր եկեղեցիներու անդամներ շատ կային, ամէնքն ալ ծնրագրեցին մարգագետինին խոտերուն վրայ և սկսան երգել սա սրտառու զաղմոսերգութիւնը. «Անապատին մէջ քափառայած»: տեսարանը շատ ապաւորիչ էր: Երգադաշտներու միջոցին, անանկ խոր լուսթիւն մը կը տիրէր որ կրակեղևին մէջ կայծերու չթրտիւնը կը լսուէր, և գետին կողմէն, խռովուն ալեակներուն աղմուկը մինչև մեզի կը հասնէր:

Ես ալ ծնրադրած էի Լիլիէնի քով և սիրոյս բովանդակ թափովը կը դիտէի. զայն: Իր աչքերը լուսաշող էին ու կուսագեղ. զիչերային սիւքը աւրտկած էր իր մազերը.

վճիտ ու երկիւղած ճայնով մը սկսած էր երգել. երկնային հրեշտակի մը պէս կ'երեւար ան ինծի և ես, աւելի իրեն էր որ կուզէի ուղղել ազօթքս:

Անկէ վերջը, գաղթականները իրենց վակոնները մտան: Ես ալ, պահակները քննելու սովորական դարձաւ ըրի և գացի հանգչելու: Բայց հաճախորէն, մօեղները սկսան բզզալ ալանջիս:

— Լիլիէն, Լիլիէն, Լիլիէն:

Գիտէի որ, աչքերուս դիւթանքը, հոգիիս հոգին, ինչ քանի մը քայլ միայն անդին կը ննջէր. հիմա աղէկ գիտէի նաև որ, այդ պաշտելի էակէն դուրս, աշխարհի վրայ չիկար ինծի համար. աւելի սիրասուն, աւելի թանկագին, աւելի ցանկալի բան մը:

Պ.

Հետեւեալ առտուն արշալոյսին, Սէտար Րիվըրը անցանք և մօտանք, կարծես դիտմամբ հարթուած անծայրածիր մարգագետինի մը մէջ, որ թեթեւակի դէպ ի Հարաւ երկարելով և Խօռաի սահմանադրուելը կաղմող անտառներուն ուղղութիւնով մինչև Ուիննէս պակօ կը տարածուէր: Առտունէ ի վեր, Լիլիէն չէր համարձակած աչքերուս մէջը նայելու: Կը տեսնայի որ երազուն երևոյթ մը ունէր. կարծես խորունկ խռովքի մը, կամ նոյնիսկ եթէ բառը շատ սաստիկ չէ՞ր դանար, տեսակ մը ամօթի ազդեցութեան տակ էր ինկած: Իր վախօնէն հաղիւ երբեմն դուրս կ'ելլար: Մօրքուր էթքինս և Մօրքուր կ'օգվընը, զայն հիւանդ կարծելով հոգածութիւններով ու գորովանքով կը շրջապատէին: Ես միայն գիտէի թէ ուրիշ'ց առաջ կուգար իր յայտնի վարանքը, թէ ո՞չ տկարութիւնը, ո՞չ ալ խղճահարութիւնն էին ատոր պատճառ, այլ քնքուշ ու տկար էակի մը մղած պայքարը, նոր ու անձանօթ զօրութեան մը դէմ որ կարծես տերեւի մը պէս պիտի քշէ տանի զինքը դէպի խորհրդաւոր ու հեռաւոր տեղ ունաք: Ու այդ խռովքը արդէն իսկ նշան մը չէր պարտութեան, օր մը չէ օր՝ մը այդ զօրութեան անձնատուր ըլլալու, և սիրելու համար ամէն բան մոռնալու բացարձակ պէտքի մը:

(Շարունակելի)

Արսոնսեք Կ. Ս. ԻիթիթճնԱն

Տպագրութիւն ԱՐՏԻՆԵՔ Օրագրի

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

59 ՊԱՏԿԵՐ ԵՒ 12 ԲԱՐՏԷՍ

Անաթոլիա Գօլէճի Բնական Գիտութեանց ուսուցիչ Բրոյժ. Յ. Յ. Մանիսաձեանի աշխատասիրած այս ընդարձակ դատադիրքը Աշխարհագրութեան ճիւղին ամենէն ճոխ եւ գեղեցիկ գործ մ'է որ պատրաստուած է մեր վարժարանաց միջին եւ բարձրագոյն դասարաններու գործածութեան համար : 200ի մօտ մեծադիր երեսներէ բաղկացեալ սոյն դասագիրքը կը պարունակէ 59 մեծ ու փոքր պատկերներ եւ 12 քարտէսներ որք մասնաւորապէս պատրաստուած են ըստ վերջին աշխարհագրական փոփոխութեանց :

Մասնաւոր խնամք եւ ընդարձակութիւն տրուած է Թուրքիոյ աշխարհագրութեան , ինչ որ այս հրատարակութեան ամենէն գերադանց մասերէն մէկն է : Ոչ նուազ կարեւոր են նաեւ գործին վերջն աւելցուած շատ մը վիճակագրական եւ այլ ցուցակներ, որ անհնաժեշտ են մասնաւորապէս լրագիր կարդացողներու համար :

Կեդրոնաւեղի՝ Յ. ՄՍՏԹԷՈՍԵԱՆ Վաճառատունը

Թիւ 27, Ֆինանսներըար եօզուշու , Կ. Պոլիս

Եւ հեղինակին քով ի Մարգուլէն

Ընտրել եւ զօրաւոր լաթակազմ

Գին 14 դր.

ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԵԻՍՏՐԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆ

Ի ԲԱՆԿԱԼԹԻ

47րդ ՏԱՐԵՇԻՔԱՆ

Վարժարանն հաստատուած է 1857ին, նպատակն է՝ աշակերտաց տալ կրօնական, բարոյական եւ գիտական կրթութիւն մը : Վարժարանի վարչութիւնը՝ Վիեննայի Միթթարեանց ձեռքն է : Ուսուցչական մարմինը (corps enseignant) որ կը բաղկանայ Երաբաններէ եւ վկայեալ աւսաբան ուսուցիչներէ, պիտի կազմեն այս տարի 24 հոգի : Ուսմանց ծրագիրն է՝ արդի երկրորդական դպրոցներու (école secondaire moderne) յատուկ յառաջագիրը, որ կը համապատասխանէ գերմանական ռեալական դպրոցին (Realschule) յառաջագրին . բայց ըստ կարի յարմարցուած է այս ծրագիրը միջավայրի պիտոյից : Վարժարանիս կատարեալ ընթացքն սուրաւոր աշակերտները կրնան շատ դիւրութեամբ եւ առանց քննութեան Եւրոպայի ու եւ ը բարձրագոյն վարժարանն յաճախել՝ ուսմունքը շարունակելու համար (ինչպէս ունինք աշակերտներ ի Վիեննա, Զուիցերիա եւն.) եւ կամ կրնան վաճառականութեան ձեռնամուխ ըլլալ : Աւանդուած լեզուներն են՝ Հայ. Տէկ. Գաղղ. Գերմ. եւ Անգլ. (վերջին 3 տարիները) : Գաղղիներէն լեզուն գործնականապէս սորվելու համար՝ աշակերտները պարտաւորեալ են միշտ նոյն լեզուն խօսելու , եւ իրենց վրայ պիտի հսկեն

գաղղիացի Մարիսըներ, զորոնք յասկապէս բերել տուաւ վարչութիւնս Բարիզէն : Այս տարի 5 պիտի ըլլայ ասոնց թիւը : Ամէն ամիս ծնողաց կը զրկուի համեմատական ամսացուցակ մը, որուն մէջ մանրամասն կը նշանակուի աշակերտին բարոյական եւ ուսուցչական վիճակը, իւրաքանչիւր դասի մէջ առած նիշերը եւն. : Վարժարանն կը գտնուի ընդարձակ ծառայից պարտէզի մը մէջ . ունի իր յատուկ բժիշկն ու դեղատունը : 1903-1904 դպրոցական տարին պիտի սկսի Սեպտեմբեր 1/14 Բշ. օրը : Դպրոցամուտի քննութիւնները պիտի կատարուին Օգոստոսի 29ին եւ 30ին , իսկ դասերը կը սկսին կանոնաւորապէս Երկուշ. օրը Սեպտ. 2ին : Հրատարակուած է վարժարանիս 5րդ տեղեկագիրը : Վարժարանիս նկատմամբ ընդարձակագոյն տեղեկութիւններ ուզողը, թող դիմէ վարժարանի վարչութեան :

Թուակ տարեկան ամենայն ծախիւք
 » գիւնթօքիկներու համար 30 օսմ. ոսկի
 » տարեկան ամենայն ծախիւք
 » ցերեկօքիկներու համար 20 օսմ. ոսկի
 » տարեկան ամենայն ծախիւք
 » արտաքիններու համար 10 օսմ. ոսկի
 վարիչ

Հ. ԳԱՐԻԵԼ Վ. ՄԵՆԵՎԻՉԻԱՆ

Կ. Պոլիս, Բանկայի

P. GABRIEL Dr. MENEVICHIAN

Constantinople, Pâncaldi

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՋ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ք Ի Ի Ղ

Մինչև 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000	Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ա Յ Ք Ի Ի Ղ

Մինչև 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղեցիկ զինքերով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաշխման (accumulation des bénéfices) ՅՈՌԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի ՏՅՈՐԷՆՈՒՅԻՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաթ Բաքրեք Օղլու

Մասնաճիւղ՝ Դալարթիա, Ինայէթ Խան, գործակալ Մինրան Էֆ. Դաւիթեան:

Դործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Վարժարանին

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսնեան արաւքման

Պալպալեան ամէն օր ակոսայի ամէն տե-

սակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան: ո եւ է ժամուռ կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցունքած ու չինած ակոսաները: Ցորեկները ակոսայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կ'ախտէ:

Ազգայնեան ձրի

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւ այլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում կանխիկ գնողին համար հարիւրին 5 գեղչ: Դործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 գեղչով եւ կ'առնուին իսկ ապառիկ գընողներէն՝ 100ին 15 գեղչով:


ՕՍՏԱՆԵԱՆ ՇԱՔԱՐԱԳՈՐԾ ԲԵՐԱՅԻ

Սայն հանրածոնոթ չաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բաքիսըռի եւ թէ՛ իբրեւ չաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բաղմաթիւ յաճախորդները։ Ամրան եղանակին մէջ, համեղ պողպատակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր։

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ Օսմ. չաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան չաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ո՛չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուններու մէջ։

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա. Թօփհըլար Ճատտէսի, Թ. 101։

14—30



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։ Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅՅԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ։

Սինկէրի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ։

ՇԱՔԱՐԱԳՈՐԾ
ՍՍՏՐԻՄ

ԲԵՐԱՅ.

1. Մեծ փողոց, Պօն Մառշէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիպէին դէմ.

ԿԱՆԱԹԱՅ.

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղլիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԵԻՏԱՐ

Չարշը Պոյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կաւարեալ երաւեսաւորութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը։

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ . ԹԱԳ . ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ . ԸՆԿ .

Հրդեհի եւ կեանքի (ի վիճէնն)

ՊԱՏՈՒՍԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԴՈՒՔՍ ԼՈՒՐ ՏԵ ՊԱՎՐԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր . ԸՆԿ . քնդդեմ հրդեհի (ի ԲԱՐԹԱԺԵՆ)

ԱԼԼԷԱՆՑԱ

Շովային ապահովագր . ԸՆԿ . (ի ձՆՆՈՎԱ)

Առն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս , Բոքսի Լիօնի

Ընդի . եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐՐԱՏԵԱՆ

Գրասենեակ , Պոլիս , Հանօբուլօ խան , Թ . 52—53—54—55—56

Ն ՈՐԱԳՈՅՆ

ԵՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԱԼ

Փարիզեան գեղեցիկ տպագրութեամբ
հրատարակուած

ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԳԱՂԻԵՐԻՆ--ՀԱՅԵՐԻՆ

Գ. ՆԱՐ-ՊԵՅԻ

Դին երկու հատորին միասին դահկ . 120

Վաճառման կեդրոնացեղին է

ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ

Ղալաթիա Սեղրոս խան Թիւ 5

9—10

Գ. Յ. ՏԵՐՐԱՏԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանձնէ վաճառականական պիտոյից ,
սպագրական գործերու պատրաստութեան
հոգը .

ԳԻՆ ԴԻՐԱՄԱՏՁԵԼԻ

Մաքուր եւ արագ գործօնեկութիւն .

Արժէք կանխիկ . 5%ի զեղչ .

Ծանօթ վաճառականաց , ապառիկ .

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն
մասամբ :

Մանրամասնութեանց համար դիմել

Կ. Յ. ՏԵՐՐԱՏԵԱՆ

ՍԱՄՍՈՆ

ՌՈՊԷՐԴ ՔՈԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը
պիտի օկսի Սեպտ . 2/15 : Կարգադրութիւն .
ներ եղած են նոր դիւրութիւններ տալու
վաճառականական ուսմանց համար : Մնայուն
բժիշկ մը՝ աշակերտներու առողջութեան ,
մարմնամարզներուն ու խողերուն : Ինչպէս
նաեւ վարժարանին ընդհանուր առողջապա-
հական վիճակին վրայ կը հսկէ : Նախորդ
տարուընէ սկսեալ բացուած է նաեւ փոքր
տղոց յատկացեալ նոր շէնքը , ուր կ'ընդուն-
ուին մինչեւ տասը տարեկան աշակերտներ :

9—12

ԼԵԻՈՆ Թ. ԹԵՐԶԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Վկայեալ Բաբիգու բժշկական վարժարանէն
Նախկին chef de clinique միջնաստի
Ատամնաբուժական վարժարանին : Կ'ընդունի
ամէն օր իր բնակարանը՝ Բերա , Մեծ-փողոց
Թ . 407 (Եանիի գարեջրատան դէմ) :

9—10